Համատեղ հռչակագիր

Հայաստանի Հանրապետության և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության միջև ռազմավարական գործընկերության մասին

Հայաստանի Հանրապետությունը և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը (այսուհետ՝ Կողմեր), հիմնվելով Հայաստան-Միացյալ Թագավորություն ռազմավարական երկխոսության հաստատման վերաբերյալ 2023 թվականի նոյեմբերի համատեղ հայտարարության վրա և ճանաչելով իրենց երկարամյա և բարեկամական հարաբերությունները, որոնք խարսխված են փոխադարձ հարգանքի, ընդհանուր արժեքների, ընդլայնվող համագործակցության և տարբեր ոլորտներում շահերի մերձեցման վրա, հայտնում են իրենց վճռականությունը՝ ամրապնդելու երկկողմ հարաբերությունները ռազմավարական գործընկերության հաստատման միջոցով։

Վկայակոչելով իրենց հանձնառությունը՝ պահպանելու և խթանելու ժողովրդավարությունը, մարդու իրավունքները, օրենքի գերակայությունը, լավ կառավարումը և կանոնների վրա հիմնված միջազգային կարգը, ներառյալ ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության և միջազգայնորեն ճանաչված սահմանների անձեռնմխելիության հարգանքը՝ Կողմերը վերահաստատում են իրենց հավատարմությունը Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության և խաղաղությունն ու անվտանգությունը խթանող միջազգային այլ փաստաթղթերի նպատակներին և սկզբունքներին։

Ընդգծելով 2025 թվականի օգոստոսի 8-ի Վաշինգտոնի խաղաղության գագաթնաժողովի հռչակագրի և «Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև խաղաղության և միջպետական հարաբերությունների հաստատման մասին» նախաստորագրված համաձայնագրի կարևորությունը՝ Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությունը վերահաստատում է իր շարունակական աջակցությունը Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության ինստիտուցիոնալացմանը և հարաբերությունների կարգավորմանը՝ հիմնված միմյանց ինքնիշխանության և տարածքային ամբողջականության փոխադարձ ճանաչման, ինչպես նաև միջպետական սահմանների սահմանազատման վրա՝ համաձայն 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագրի։

Ողջունելով տարածաշրջանային կապակցվածության և կայունության բարելավման

նպատակով տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակման ուղղությամբ շարունակվող ջանքերը՝ Կողմերը գիտակցում են, որ կայուն խաղաղությունը և կապակցվածությունը կարող են խթանել տարածաշրջանի բարգավաճումն ու անվտանգությունը: Այդ առումով Կողմերը համաձայնել են շարունակել կապակցվածության նախագծերի քննարկումը՝ ընդգծելով «Խաղաղության խաչմերուկ» և «ԹՐԻՓՓ» նախաձեռնությունները՝ որպես տարածաշրջանային կապակցվածության և տնտեսական համագործակցության ամրապնդման հարթակներ:

Կողմերը հասել են հետևյալ փոխըմբռնմանը՝

Պաշտպանություն և անվտանգություն. Կողմերը համատեղ երկարաժամկետ հանձնառություն ունեն՝ զարգացնելու Հայաստանի կարողությունները անվտանգության, դիմադրողականության և պաշտպանության ոլորտներում: Նրանք ընդգծում են տարածաշրջանային խաղաղության և կայունության խթանման, Հայաստանի՝ անվտանգության փոփոխվող մարտահրավերները կառավարելու կարողությունների ամրապնդման և համագործակցության ընդլայնման կարևորությունն այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են պաշտպանական համագործակցությունը, ինստիտուցիոնալ բարեփոխումները, սահմանային անվտանգությունը և անօրինական միգրացիայի դեմ պայքարը, կիբեռդիմակայունությունը և խառնածին սպառնալիքներին ավելի լայն արձագանքը: Կողմերը նաև հաստատում են իրենց մտադրությունը՝ համագործակցելու բազմակողմ հարթակներում, որտեղ համընկնում են շահերը, և առկա են հնարավորություններ:

Տնտեսական աճ և զարգացում. Կողմերը համատեղ նպատակ ունեն՝ խթանելու Հայաստանում կայուն տնտեսական աճը և դիվերսիֆիկացումը, խորացնելու երկկողմ առևտրային և ներդրումային կապերը և ամրապնդելու տարածաշրջանային կապակցվածությունը՝ այդ թվում տրանսպորտի, էներգետիկայի և հաղորդակցությունների ոլորտներում՝ որպես կայունությունն ու բարգավաճումը խթանող գործոններ: Նրանք գիտակցում են գործարար միջավայրի բարելավման, մասնավոր հատվածի զարգացմանն աջակցելու, ներդրումները խթանելու և փոխադարձ համաձայնությամբ որոշակի ոլորտներում համագործակցելու կարևորությունը:

Կառավարում և ժողովրդավարական դիմակայունություն. Կողմերը ժողովրդավարական արժեքների, թափանցիկ և արդյունավետ կառավարման, ինչպես նաև ներառական ինստիտուտների նկատմամբ համատեղ հանձնառություն ունեն: Նրանք գիտակցում են հանրային հատվածի գործունեության ամրապնդման, ազատ և

արդար ընտրությունների ապահովման, խառնածին սպառնալիքներին հակազդելու, կոռուպցիայի դեմ պայքարի ջանքերը խթանելու և անկախ մեդիայի և քաղաքացիական հասարակության համար նպաստավոր միջավայր ստեղծելու կարևորությունը: Նրանք նաև հանձնառու են ուսումնասիրելու երկկողմ համագործակցության հետագա հնարավորությունները, որոնք կամրապնդեն ժողովրդավարական դիմադրողականությունը:

Եզրափակիչ դրույթներ

Կողմերը համաձայնության են եկել վերոնշյալ երեք ոլորտների վերաբերյալ ռազմավարական գործընկերության ամենամյա նիստ անցկացնելու վերաբերյալ: Սա կյանքի կկոչվի արդյունքների համատեղ շրջանակային փաստաթղթի միջոցով, որը կապահովի Հայաստանի և Միացյալ Թագավորության գործողությունների միջև համահունչությունը և կապահովի մոնիթորինգի մեխանիզմ՝ առաջընթացը դիտարկելու համար:

Այս հռչակագիրը միջազգային պայմանագիր չէ և չի ստեղծում իրավունքներ կամ պարտավորություններ՝ համաձայն ներպետական կամ միջազգային օրենսդրության: Այս հռչակագրի շրջանակներում գործողությունների իրականացումը կախված կլինի ռեսուրսների առկայությունից և Կողմերի համապատասխան օրենքներից ու կանոնակարգերից: Կարող են սահմանվել և փոխհամաձայնեցվել համագործակցության լրացուցիչ ոլորտներ: Այս համատեղ հռչակագիրը կարող է փոփոխվել ցանկացած պահի՝ փոխադարձ գրավոր համաձայնությամբ: Կողմերից յուրաքանչյուրը կարող է ցանկացած պահի դադարեցնել համագործակցությունը այս համատեղ հռչակագրի շրջանակներում՝ գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին առնվազն վեց ամիս առաջ:

Հայաստանի Հանրապետության վարչապետ	Միացյալ Թագավորության վարչապետ
Նորին գերազանցություն	Նորին գերազանցություն
Նիկոլ Փաշինյան	Քիր Սթարմեր